

մաքութիւն է պահանջ մատ զմասմա ինչու անվագու զայ պահա զայ Ա  
մատ զայ ան անդ ցը բառարա ու բառարա ու անդարա մատ մատ ան մատ ան  
զայ ան անդ ցը բառարա ու բառարա ու անդարա մատ մատ ան մատ ան

ՄԻԵՐԱՅԻ

**ԼԵ. ՏԱՐԻ - ԱՅԻ ՇՐՋԱՅ**

1963

◀ Հոկտ. - Օոյլամ. - Գեկտ. ▶

Թիր 10-11-12



**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**



**ԿՈՉ ՄԵՐ ՍԻՐԵՑԵԱԼ ՃՈՂՈՎՈՒՐԴԻՆ**

•ՊՐԻՍՏՈՍԻ ՄԱՆԳԵԱՆ և Ա. Յարութեան Սրբազնու վայերէն ողջոյն և  
օրհնութիւն Հայրապետառան մեր բոլոր զուտուներուն:

Տարիներու մեր վասփարը՝ ուխուի զորու ի Ա. Յազդարն երտաստէմ, իրակունութիւն գարձաւ, մեզի համար զոհաւանկաթիւն է զանուիլ Ա. Յակոբեանց գարաւոր Մայրավանքին մէջ, մեր շուրջը ունենալով Ա. Յակոբեանց զինուորեալ Միաբանութիւնը, իր Պետին Ամեն, Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսի զինուորութեամբ և մեր թեմատիւ բարեջան Առաջնորդները, եկած աշխարհի չորս ծագերէն:

Մեր ուխալ կատարելէ և Ա. Տեղերուն մէջ երազագելէ եաք, միիթառ-  
ըութիւն եղաւ մեզի, աեսնել վերաշինութեան հակոյտկան զօրծք որ կը կա-  
տարուի համայն քրիստոնէութեան Սրբավայրին, Ա. Յարութեան հնադարեան  
Տաճարին մէջ, զեկալարութեան ներքի իր տատէր ելեք ազգերու (Յոյն, Հայ  
և Լուսին), սրանց մասնագէտ ճարտարապետները իմ սաստիւթեամբ և հատու-  
թեամբ կը հսկեն կատարու ող աշխատանքներուն:



Մենք սրաի խոր ուրախութեամբ տեսանք նուի Տաճարի Հայկական բռժնի մէջ կատարուող փայլուն տշխատանքը, որ պատիւ կը բերէ մեր Եկեղեցին ու ժողովուրդին, որովհետեւ կը պահպանէ և կը պայծառացնէ մեր լուսաբնալ նոյննեաց նուիրական ժառանգութիւնը:

Մեր Եկեղեցւոյ գարաւոր իրաւունքները և միջազգային դիրքը անվտանգ ու ամսուր պահելու մտահոգութեամբ, Մենք անձամբ ստանձնեցինք Նախագահութիւնը Ս. Յարութեան Տաճարի վերանորոգութեան Համազգային Յանձնախումբին, որ իր տռաջին ժողովը զումարեց Երուսաղէմի Պատրիարքարանի դաշնիքին մէջ Հոկտեմբերի 15ին և աւարտեց իր տշխատանքը բարեյալող արդիւնքներով, խանդավառ մթնոլորտի մէջ:

Մենք, որպէս Նախագահ Ս. Յարութեան Տաճարի վերանորոգութեան Համազգային Յանձնաժողովին, պարագ կը զգանք անգամ մը ևս մեր Հայրապետական սրապին կոչը ուղղել մեր աղջի բոլոր զաւակներուն անխափի, որպէսզի սկսուած հանգանակութեան զործը պոսակուի լիակատար յաջալութեամբ: Մենք վստահ ենք թէ համայն Հայ հաւատացեալ ժողովուրդը պիտի լսէ մեր ձայնը և առանց ստկարիելու, իր լուման պիտի արամագրէ Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան պատմական մեծ զործին, որով անգամ ևս պիտի փառաւորուի անունը Հայ Եկեղեցին ու Հայ Աղջին, ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան առաջ:

Յաւիտենական Ս. Քաղաք Երուսաղէմէն սէր և խաղաղութիւն և Առողութային օրնութիւն ի վերայ ամեննեսան, այժմ և միշտ, ամէն:

30 Հոկտեմբեր 1963, Երուսաղէմ



*Արքայի ձեռքնական*  
ԹԱՅՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԱՄՓՈՂԲՈՒ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ